

## **Բարեգործական աճուրդի անցկացման պայմաններ**

Հարգելի մասնակից,

Ուրախ ենք հայտնել Ձեզ, որ ՅՈՒՔՈՄ ՄՊ ընկերությունը (ՅՈՒՔՈՄ-ը) բարեգործական նպատակներով կազմակերպում է 044 համարային շարքից թվով 33 գունավոր հեռախոսահամարների օգտագործման իրավունքի տրամադրման էլեկտրոնային աճուրդ, հատուկ այդ նպատակով ստեղծված [www.044.ucom.am](http://www.044.ucom.am) կայքի միջոցով:

Մույն պայմանները սահմանում են մասնակցի (Մասնակից կամ Դուք կամ Ձեր/ Ձեզ) կողմից էլեկտրոնային բարեգործական աճուրդին (այսուհետ նաև Աճուրդ) մասնակցելու կարգն ու պայմանները:

Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ ՅՈՒՔՈՄ-ի կողմից բարեգործական աճուրդի անցկացման պայմաններին և կարգին, և որևէ պայմանի հետ համաձայն չլինելու դեպքում հրաժարվել մասնակցությունից:

Այցելելով այս կայքը, կատարելով Աճուրդին որպես մասնակից գրանցվելուն ուղղված բոլոր անհրաժեշտ քայլերը Դուք ընդունում եք, որ ծանոթացել եք դրա անցկացման պայմաններին, հասկացել և համաձայն եք դրանց հետ:

### **Աճուրդի ընթացակարգ.**

- **ԵՐԲ**

2016թ. նոյեմբերի 1-ին:

- **Ո՞վ կարող է մասնակցել.**

- Աճուրդին կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ և բավարարում է շարժական հեռախոսակապի ծառայություններին բաժանորդագրվելու համար ՅՈՒՔՈՄ-ի կողմից սահմանված պայմաններին:
- Մեկ մասնակիցը միաժամանակ կարող է հայտ ներկայացնել մեկից ավել հեռախոսահամարների համար:

- **Ի՞նչպես գրանցվել.**

- Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել [www.044.ucom.am](http://www.044.ucom.am) կայքում, հետևելով համակարգի հրահանգներին և ցուցումներին:
- Գրանցման ժամանակ Ձեզնից կպահանջվի տրամադրել հետևյալ անձնական տեղեկությունները՝ անուն, ազգանուն, հեռախոս, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք կարող են պահանջվել մասնակցին պատշաճ գրանցելու համար:
- Գրանցման գործընթացի ավարտին՝ գրանցման պահին Ձեր կողմից մուտքագրված հեռախոսահամարին ՅՈՒՔՈՄ-ը կուղարկի նույնականացման կոդ պարունակող կարճ հաղորդագրություն (SMS), որն անհրաժեշտ կլինի մուտքագրել [www.044.ucom.am](http://www.044.ucom.am) կայքում գրանցման գործընթացը պատշաճ վերջնականացնելու համար:

- Խնդրում ենք նկատի ունենալ, որ աճուրդին մասնակցելու ժամանակ Ձեր նախընտրած յուրաքանչյուր հեռախոսահամարի համար առաջին անգամ գնային հայտ ներկայացնելու պահին, Ձեր հաշվից սառեցվելու է տվյալ հեռախոսահամարի համար սահմանված մեկնարկային գնի 5%-ին համարժեք ՀՀ գումար, որպես աճուրդին մասնակցելու վճար (յուրաքանչյուր հեռախոսահամարի մասով տվյալ հեռախոսահամարի մեկնարկային գնի 5 %-ը): Խնդրում ենք աճուրդին մասնակցելու օրն ապահովել Ձեր բանկային քարտի վրա սառեցման ենթակա գումարին համարժեք մնացորդի առկայությունը:
- Աճուրդը սկսելու պահից Դուք կարող եք ներկայացնել գնային հայտեր՝ համապատասխանաբար առաջարկելով Ձեր նախընտրած հեռախոսահամարի համար սահմանված մեկնարկային գնից բարձր այն գինը, որը Դուք պատրաստ եք վճարել տվյալ հեռախոսահամարի համար:
- Գնային հայտը ներկայացվում է Մասնակցի կողմից համապատասխան քայլ կատարելու միջոցով: Մեկ քայլի արժեքն է 50 000 դրամ:
- Դուք կարող եք կատարել մեկից ավել քայլ, համապատասխանաբար ավելացնելով Ձեր կողմից ներկայացվող գնային հայտի արժեքը:
- Նախքան աճուրդի ավարտը, յուրաքանչյուր մասնակցի իրավունք ունի ներկայացնել այլ մասնակցի կողմից ներկայացրած գնային հայտում սահմանված գումարը գերազանցող հայտ:
- Աճուրդի ավարտի վերջին 3 (երեք) րոպեների ընթացքում որևէ մասնակցի կողմից նոր հայտ ներկայացնելու դեպքում մինչև աճուրդի ավարտը մնացած ժամանակը համապատասխանաբար դառնում է 3 րոպե:
- Աճուրդի անցկացման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր մասնակցի իր կողմից գրանցման ժամանակ մուտքագրված հեռախոսահամարի վրա կարճ հաղորդագրություններ (SMS) է ստանում յուրաքանչյուր անգամ, երբ մեկ այլ մասնակցի կողմից տվյալ հեռախոսահամարի համար ավելի բարձր գին է առաջարկում: SMS-ի մեջ նշվում է հեռախոսահամարը, առաջարկվող գումարի չափը և այն մասնակցի հերթական համարը, ով առաջարկել է ավելի բարձր գումար:
- Աճուրդով առաջարկվող հեռախոսահամարների համար սահմանված մեկնարկային գներին կարելի է ծանոթանալ [www.044.ucom.am](http://www.044.ucom.am) վեբ կայքում:

### **Ո՞վ է հաղթողը.**

- Աճուրդի հաղթող է ճանաչվում աճուրդի ավարտի պահին համակարգի կողմից գրանցված վերջին ամենաբարձր գնային հայտ առաջարկած մասնակցը:
- Տվյալ հեռախոսահամարն օգտագործելու իրավունքը համարվում է տրամադրված հաղթող ճանաչված մասնակցին, վերջինիս կողմից դրա համար ներկայացված հայտում սահմանված գնով, որը նա պարտավոր է վճարել աճուրդն ավարտվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխանաբար փոխանցելով նշված գումարը ՅՈՒՔՈՄ-ի 1570043102052900 հաշվեհամարին, ներկայացնելով վճարումը հավաստող փաստաթուղթը՝ համապատասխան հեռախոսահամարի միջոցով ՅՈՒՔՈՄ-ի շարժական հեռախոսակապի ծառայություններին բաժանորդագրվելու բաժանորդային պայմանագիրը կնքելու ժամանակ: Սույն կետում սահմանված վճարման փաստաթղթի ներկայացումը համարվում է բաժանորդային պայմանագրի կնքման նախապայման:

### **Ի՞նչ է «Գնել հիմա» (Buy it now)**

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է սահմանել աճուրդում առաջարկվող հեռախոսահամարներից յուրաքանչյուրի օգտագործման իրավունքի ձեռքբերման առավելագույն գին, որով ՅՈՒՔՈՄ-ը տվյալ հեռախոսահամարը պատրաստ է տրամադրել մասնակիցներից յուրաքանչյուրին, ով առաջինը կսեղմի տվյալ հեռախոսահամարի կոդքին տեղակայված **«Գնել հիմա» (Buy it now)** կոճակը, դրանով արտահայտելով տվյալ հեռախոսահամարի օգտագործման իրավունքը ՅՈՒՔՈՄ-ի կողմից կայքում սահմանված գնով ձեռքբերելու իր համաձայնությունը՝ առանց աճուրդին մասնակցելու: Նշված ընթացակարգով հեռախոսահամարի օգտագործման իրավունքը գնած մասնակցի նկատմամբ կիրառվում են սույն պայմաններով սահմանված կարգով հաղթող ճանաչված մասնակցի նկատմամբ կիրառվող կանոնները:

### **Ո՞րն է չկայացած աճուրդը.**

- Եթե որևէ հեռախոսահամարի համար չի առաջարկվել որևէ գին կամ առաջարկված գինը ցածր է մեկնարկային գնից ապա տվյալ հեռախոսահամարի մասով աճուրդը համարվում է չկայացած:
- ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է աճուրդը չկայացած հայտարարվելու պահից իր կողմից սահմանված ողջամիտ ժամկետում կազմակերպել կրկնաճուրդ, որի պայմանները, կարող են փոփոխվել ՅՈՒՔՈՄ-ի բացառիկ հայեցողությամբ կամ ընդհանրապես հրաժարվել կրկնաճուրդ կազմակերպելուց:

### **Աճուրդից հրաժարվելը.**

- ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի հրաժարվել Աճուրդն անցկացնելուց, սակայն ոչ ուշ, քան Աճուրդի անցկացման օրվանից երեք օր առաջ, այդ մասին համապատասխան ծանուցում տեղադրելով [www.ucom.am](http://www.ucom.am) և/կամ <https://044.ucom.am/> վեբկայքերի միջոցով:

### **Արդյունքներ և բաժանորդային պայմանագրի կնքում**

- ՅՈՒՔՈՄ-ն աճուրդի արդյունքների մասին հաղթողներին տեղեկացնում է իրենց կողմից Աճուրդին մասնակցելու ժամանակ գրանցման պահին մուտքագրված հեռախոսահամարներին կարճ հաղորդագրություն (SMS) ուղարկելու միջոցով:
- Աճուրդի ավարտին հաղթող ճանաչված անձին այդ մասին կարճ հաղորդագրության (SMS)-ի ուղարկումն ու դրա ստացումը հաղթողի կողմից համարվում է վերջինիս կողմից սույն Հատուկ պայմանների ընդունում և դրանց հիման վրա անցկացված Աճուրդի և դրա արդյունքների մասին պատշաճ ձևով հաստատված և հաղթողի ու ՅՈՒՔՈՄ-ի միջև ստորագրված արձանագրություն, որն ունի պայմանագրի ուժ:
- Աճուրդն ավարտվելուց հետո և դրա արդյունքների մասին կարճ հաղորդագրության միջոցով ծանուցելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Հաղթողների հետ կկնքվի համապատասխան հեռախոսահամարի միջոցով ՅՈՒՔՈՄ-ի շարժական հեռախոսակապի ծառայությունների Ունիվերսալ 12500 սակագնային պլանին հատուկ պայմաններով բաժանորդագրվելու բաժանորդային պայմանագիր՝ ըստ ՅՈՒՔՈՄ-ի կողմից սահմանված հատուկ առաջարկի պայմանների, որին կարող էք ծանոթանալ այստեղ՝ [Բաժանորդային պայմանագիր իրավաբանական անձանց.pdf](#) և [Բաժանորդային պայմանագիր ֆիզիկական անձանց.pdf](#):
- Եթե հաղթողը չի ներկայանում բաժանորդային պայմանագիր կնքելու համար, այդ մասին կարճ հաղորդագրությունը (SMS) ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, ապա ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի հրաժարվել տվյալ մասնակցի հետ բաժանորդային պայմանագիր կնքելուց և

հեռախոսահամարը տնօրինել իր հայեցողությամբ, այդ թվում՝ այն տրամադրել աճուրդում հաջորդ ամենաբարձր գինն առաջարկած մասնակցին: Ընդ որում, աճուրդում հաղթող ճանաչված, սակայն հետագայում ՅՈՒՔՈՄ-ի շարժական հեռախոսակապի ծառայություններին բաժանորդագրվելու բաժանորդային պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակցին տվյալ հեռախոսահամարի օգտագործման իրավունքը ձեռքբերելու համար գնային հայտ ներկայացնելու պահին սառեցված գումարը չի վերադարձվում:

- Խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ Աճուրդին մասնակցելու ժամանակ մասնակցի նախընտրած հեռախոսահամարի համար առաջին անգամ գնային հայտ ներկայացնելու պահին սառեցված գումարն ենթակա է ապաստուցման աճուրդի ավարտին հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա ընթացքում:

### **Հեռախոսահամարի օգտագործման իրավունք.**

- Մասնակցելով աճուրդին՝ մասնակիցներն ընդունում են, որ հաղթելու դեպքում համապատասխան հեռախոսահամարն իրենց տրամադրվում է օգտագործման իրավունքով:
- Հեռախոսահամարի օգտագործման իրավունքը դադարում է հաղթողի կողմից հեռախոսահամարից հրաժարման դեպքում, ինչպես նաև ՅՈՒՔՈՄ-ի հետ տվյալ հեռախոսահամարի համար կնքված բաժանորդային պայմանագիրն ՅՈՒՔՈՄ-ի կողմից պայմանագրով սահմանված հիմքերով լուծվելու դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
- ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի աճուրդի չկայացման դեպքում կամ օրենքով կամ սույն պայմաններով սահմանված դեպքերում հեռախոսահամարը հաղթողին չտրամադրելու կամ հաղթողի կողմից հեռախոսահամարից հրաժարման դեպքում (բաժանորդային պայմանագիրը կնքելուց առաջ կամ հետո) այն տնօրինել իր հայեցողությամբ, այդ թվում՝ այն տրամադրել մեկ այլ անձի:

### **Վճարում**

- Աճուրդի արդյունքներով հեռախոսահամարի օգտագործման իրավունք ձեռքբերելու դիմաց բոլոր վճարումներին իրականացվում են ՀՀ դրամով՝ անկանխիկ:

### **Այլ պայմաններ**

- Անձը կարող է մասնակցել աճուրդին և հաղթող ճանաչվել՝ պայմանով, որ սույնով սահմանված բոլոր դրույթներն ու պայմանները կատարվել և պահպանվել են նրա կողմից:
- Դուք համաձայն եք և ընդունում եք, որ աճուրդին մասնակցելը կամ մասնակցության համար նախատեսված ընթացակարգն սկսելը համարվելու է Ձեր կողմից սույն պայմանների ընդունում:
- Հեռախոսահամարի օգտագործման իրավունքը հաղթողի պահանջով ենթակա չէ դրամական փոխհատուցման՝ ամբողջությամբ կամ մասամբ:
- ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի դադարեցնել անձի մասնակցությունն աճուրդին և/կամ մերժել հեռախոսահամարի օգտագործման իրավունքի տրամադրումը հաղթողին, եթե հայտնաբերվել են խաբեության կամ խարդախության դեպքեր: Սույն կետի հիման վրա աճուրդին անձի մասնակցությունը դադարեցնելու և/կամ հեռախոսահամարի օգտագործման իրավունքի տրամադրումը մերժելու հիմք կարող է հանդիսանալ ՅՈՒՔՈՄ-ի հիմնավոր կասկածը, և ՅՈՒՔՈՄ-ը պարտավոր չէ մասնակիցներին ասպացուցել նման խարդախության կամ խաբեության առկայությունը:

## Գաղտնիություն

- Դուք սույնով համաձայնում եք, որ Ձեր կողմից տրամադրված Ձեզ վերաբերող անձնական տեղեկությունները, ներառյալ առանց սահմանափակման Ձեր անունը և ազգանունը և այլ տվյալները կարող են օգտագործվել ՅՈՒՔՈՄ-ի կողմից օրենքով չարգելված եղանակներով և նպատակներով:
- Աճուրդին որպես մասնակից գրանցվելիս, Դուք երաշխավորում և հաստատում եք, որ Ձեր 18 տարին լրացած է և Ձեր կողմից մուտքագրված անձնական տեղեկությունները ճիշտ են և լիարժեք: Դուք կրում եք որպես մասնակից գրանցման ժամանակ ներկայացված տեղեկատվության ճշմարիտ և ստույգ լինելու ողջ պատասխանատվությունը:  
ՅՈՒՔՈՄ-ը չի կրում որևէ պատասխանատվություն Ձեր կողմից սխալ լրացված և/կամ մուտքագրված տեղեկությունների հետևանքով Ձեզ պատճառված վնասի և/կամ անհարմարության համար:
- Անվտանգության և անհատական տվյալների գաղտնիությունն ապահովելու նպատակով, աճուրդին գրանցվելու ժամանակ, յուրաքանչյուր մասնակցին տրվելու է հերթական համար, որը տեսանելի է այլ մասնակիցներին: Որևէ այլ տեղեկատվություն, բացառությամբ մասնակցի հերթական համարը, երրորդ անձանց համար տեսանելի չէ:
- Երրորդ անձանց կողմից (ներառյալ անչափաս երեխաների կողմից) Ձեր անունից որպես մասնակից գրանցվելը (ներառյալ վճարային քարտի միջոցով գումարի սառեցմանն ուղղված գործողություններ կատարելը), աճուրդին մասնակցելը, հայտ ներկայացնելը և այլ նմանատիպ գործողություններն իրականացնելը համարվում է կատարված Ձեր անունից և կողմից: Բացառապես Դուք եք պատասխանատվություն կրում երրորդ անձանց կողմից Ձեզ վերաբերող անձնական տեղեկատվության տրամադրման և Ձեր վճարային քարտերի օգտագործման համար:
- ՅՈՒՔՈՄ-ը երաշխավորում է գործադրել իր լավագույն ջանքերն առավելագույնս ապահովելու համար 044.ucom.am կայքի անվտանգությունն ու ապահովությունը և պատասխանատվություն է կրում մասնակցի կողմից աճուրդին գրանցվելու ժամանակ մուտքագրված տեղեկատվության չտարածման և գաղտնիության համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում և համապատասխան իրավասու մարմիններին ՅՈՒՔՈՄ-ի կողմից այդպիսի տվյալների հրապարակման անհրաժեշտության: Այնուամենայնիվ, Դուք ընդունում և համաձայնում եք, որ ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է օգտագործել Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը պայմանագրային պարտավորությունները կատարելու, այդ թվում՝ դրանց դատական կարգով պատշաճ իրականացումն ապահովելու համար:
- 044.ucom.am կայքում տեղակայված այլ կայքերի հղումներից օգտվելիս ՅՈՒՔՈՄ-ը չի երաշխավորում այդ կայքերի անվտանգությունն ու ապահովությունը: Այդ կայքեր այցելություններն իրականացվում են Ձեր կողմից՝ Ձեր ռիսկով:
- [044.ucom.am](https://044.ucom.am) կայք այցելելիս, մեր կողմից գրանցվում է Ձեր այցի օրը, ամիսը, տարեթիվն ու ժամը:
- Ինտերնետ կայքի և օգտագործողների միջև տեղեկատվության հոսքը պաշտպանված է SSL սերտիֆիկատով:

## Այլ դրույթներ

- UCOM-ը հանդիսանում է պատշաճ ձևով գրանցված ապրանքային նշան:
- 044.ucom.am կայքի բացառիկ իրավատեր է հանդիսանում ՅՈՒՔՈՄ-ը: Դուք կարող եք օգտվել այդ կայքից միայն անձնական նպատակներով: Դուք իրավասու չեք որևէ կերպ օգտագործել, վերարտադրել, փոխանցել, տարածել և/կամ որևէ այլ կերպ պահպանել 044.ucom.am կայքում տեղակայված տեքստը,

առողիովիզուալ պատկերները, գծապատկերներ, նշանները, վեբ-գրաֆիկան, ցանկացած այլ տեղեկությունները կամ դրանց մասը և/կամ UCOM բրենդը և/կամ դրա մասը, առանց ՅՈՒՔՈՄ-ի գրավոր համաձայնության: Կայքի բովանդակության ցանկացած չթույլատրված օգտագործումը կարող է դիտարկվել օրենսդրության խախտում և Դուք կկրեք պատասխանատվություն համաձայն կիրառվող օրենսդրության:

- ՅՈՒՔՈՄ-ն իրեն իրավունք է վերապահում փոփոխել սույն պայմանները, աճուրդի նախատեսվող ամսաթվից առնվազն 3 օր առաջ 044.ucom.am կայքում փոփոխությունները հրապարակելու միջոցով:
- Ձեր կողմից ինտերնետի, ներառյալ վերջինիս բովանդակության օգտագործումը, իրականացվում է բացառապես Ձեր սեփական ռիսկով և պետք է համապատասխանի տեղական և միջազգային բոլոր կիրառելի օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և նորմերին:
- ՅՈՒՔՈՄ-ը կձեռնարկի ողջամիտ միջոցներ 044.ucom.am կայքի անխափան աշխատանքն ապահովելու համար, սակայն, այնուամենայնիվ, ՅՈՒՔՈՄ-ը պատասխանատվություն չի կրում 044.ucom.am կայքում առկա թերությունների կամ անսարքությունների հետևանքների համար:
- ՅՈՒՔՈՄ-ը պատասխանատվություն չի կրում անհաղթահարելի ուժի ազդեցության կամ իր վերահսկողությունից դուրս հանգամանքների հետևանքով իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- Եթե սույն պայմանները բացի հայերենից կազմված են նաև այլ լեզվով, հայերեն տարբերակը գերակայում է: